լինիցին պատրաստ Օրն որում նշանաւորեալ վասն դատողութեան։

ԳԼՈՒԽ ՃԶ.

'Ի դռանէ դատաստանէ ընտրեսցի ինն սուն և չորս այր բարեգործ և համբաւոր, 70 'ի նոցանէ վասն որոնելոյ մաքրութիւն և կամ աղտեղութիւն մեղաւորի, և 24 'ի նոցանէ վասն դատելոյ, այլ 12 'ի 24 առնէ պիտոյ է լինիլ 'ի ընտրողութենէ մեղաւորի, որում լինիցի 'ի նմանէ գանգատեցեալ։

ԳԼՈՒԽ ՃԷ.

Օրն դատողութեան քրէական մեղաւորի ելցէ իշխան խորհրդակցօք հանդերձ զունտ մի զօրօք երկուս դրօշակօք և մտցէ 'ի յապարանն դատաստանի, և բազմեսցի վերին աստիճան, և 'ի ներքոյ աստիճանի նստցի դատաւոր քաղաքին ընդ խորհրդակցօք, և 'ի վայր աստիճանի դպիրք և ատենաբանք, և 'ի ատենի սոցա 94 նշանաւոր անձինքն, եթէ որոնողք, և եթէ դատողք։ Նախ երդմնեցուցանեն 70 առն որոնողաց, և ապա 24 առն դատողաց 'ի վերայ սրբոյ Աւետարանի զի նոքա խոստովան լինին առաջի ատենի իշխանի և դատաւորաց, այն որ ըստ օրինաց հայոց, և 'ի բնական բնութեան և բանական զօրութենէ հոգւոյ մարդոյ զկամս և զխորհուրդս և զճիրս իւ-